ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ, ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԴԽ-Ի ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆԸ

Պետական համակարգում խարդախության սխեմայի մշակման, կիրառման և անպատժելիության մասին

2011թ.

«**ԽԱՐԴԱԽՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱ** (թե ինչպես է նոտարների եւ դատավորների համար կաշառակերության «անծայրածիր խոպան» ստեղծվել՝ կտակի մասին «առոչինչ» փաստաթուղթ տալով եւ մեկնաբանելով)»: *«Առավոտ» օրաթերթ, 28.05.2011թ.*

2013թ.

Խնդիրն ուսումնասիրությունից հետո ՀՀ Ազգային անվտանգության խորհուրդը **2013թ.** գրություն է ներկայացրել ՀՀ վարչապետին՝ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու, ինչպես նաև Բազելի կոնվենցիային միանալու վերաբերյալ առաջարկություններով:

2013թ.

ՀՀ կառավարությունը ի պատասխան վերոգրյալ գրությանը նշել է, որ կլրամշակվի «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը, որի շրջանակներում կքննարկվեն ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի կողմից ներկայացված առաջարկությունները:

2013թ.

2013թ. դիմում է ներկայացվել ՀՀ սահմանադրական դատարան՝ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի դրույթների սահմանադրականության վիճարկման պահանջով:

2014 թ.

«Հաղորդում ՀՀ սահմանադրական դատարանի 2014թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ». *«2014 թվականին ՀՀ Ազգային ժողովը, ինչպես նաև ՀՀ կառավարությունը, ՀՀ սահմանադրական դատարանի 25.02.2014թ. ՍԴՈ-1140 որոշման ընդունումից հետո, չեն անդրադարձել «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքում համապատասխան փոփոխություններ կատարելու հարցին և համապատասխան նախաձեռնությամբ հանդես չեն եկել: Ստեղծված իրավիճակը ՀՀ սահմանադրական դատարանի կողմից գնահատվում է* ***անընդունելի և իրավական պետության սահմանադրաիրավական պահանջներին ոչ հարիր, հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից հստակ արձանագրվել էր, որ գործող օրենսդրական կարգավորումների անհստակությունը կարող է մարդկանց իրավունքների խախտման լուրջ պատճառ դառնալ»:***

2015 թ.

«Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը ՀՀ վարչապետի կողմից սահմանված կարգով ներկայացվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով:

2015 թ.

«Հաղորդում ՀՀ Սահմանադրական դատարանի 2015թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ». ***«2014 թվականի փետրվարի 25-ի ՍԴՈ-1140 որոշման*** *կապակցությամբ 22.01.2015 թվականին ՀՀ Ազգային ժողովում մշակվել եւ շրջանառության մեջ է դրվել «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-703-22.01.2015-ՄԻ-010/0): Նշված նախագծի՝ ՀՀ Ազգային ժողովի նստաշրջանի օրակարգ ընդգրկելը* ***ՀՀ Ազգային ժողովի 23.03.2015թ. որոշմամբ հետաձգվել է մեկ տարով»:***

2016 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2014 թվականի փետրվարի 25-ի ՍԴՈ-1140 որոշումն ընդունելուց հետո, երկու տարի անց ի կատարումն այդ որոշման՝ ՀՀ Ազգային ժողովը 19.10.2016թ. ՀՕ-180-Ն ՀՀ օրենքով փոփոխություն է կատարել դիտարկվող օրենքի 56-րդ հոդվածի 5-րդ կետում՝ *«Կտակը վերացնելու մասին դիմումի վրա եղած ստորագրությունը պետք է վավերացնի նոտարը»* նորմը փոխարինվել է ***«Կտակը վերացնելու կամ փոփոխելու մասին դիմումը վավերացվում է կտակի վավերացման համար սահմանված կարգով»:***

Այսինքն՝ «**եղած ստորագրությունը պետք է վավերացնի նոտարը**» եզրույթը հանվել է: Բացի այդ, նույն հոդվածը լրացվել է 7-րդ կետով՝ ***«Նոտարը ժառանգության բացման մասին տեղեկանալու պահից ծանուցում է ժառանգներին կտակի առկայության մասին»:***

Իրավական հետևանքներ

1. Վերոգրյալից հետևում է, որ դատական պրակտիկայում կայացված վճիռները, որտեղ կիրառվել է «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 5-րդ կետի նորմը՝ «***եղած ստորագրությունը պետք է վավերացնի նոտարը***» իրավական պետության պահանջների ներքո պետք է վերանայվեին, եթե դրա կիրառման և մեկնաբանման հիմքով ***մարդկանց իրավունքների խախտման դատական վճիռները լուրջ պատճառ են դարձել:***
2. ՀՀ նոտարական գրասենյակներում պահվող կտակների վերացնելու կամ փոփոխելու մասին դիմումները, որոնք չեն վավերացվել կտակի վավերացման համար սահմանված կարգով, լեգիտիմ չեն, առոչինչ են օրենքի ուժով:

Հետևաբար, նոտարները պարտավոր են ժառանգության բացման մասին տեղեկանալու պահից ժառանգական գործը վերանայել և ծանուցել ժառանգներին կտակի առկայության մասին, հաշվի առնելով վերոգրյալ օրենքի փոփոխությունը: **Կտակարարները և ժառանգները իրավունք ունեն տեղեկանալու պետության կողմից այն դիմումների մասին, որոնք առկա են, սակայն օրենքի ուժով առոչինչ են:**

3. **Կտակների վերացնելու կամ փոփոխելու մասին դիմումները, որտեղ ստորագրության իսկությունը վավերացվել է «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի հիմքով՝ առոչինչ են օրենքի ուժով: ՀՀ նոտարները պարտավոր են այդ մասին տեղեկացնել ՀՀ կառավարությանը, ՀՀ արդարադատության նախարարությանը, ՀՀ ազգային ժողովին, ինչպես նաև կտակարարներին և ժառանգներին, մասնավորապես ժառանգության բացման մասին տեղեկանալու պահից: Կտակարարները, որոնց մոտ պահվում են նման առոչինչ փաստաթղթերի երկրորդ բնօրինակը, պետք է հրավիրվեին ՀՀ նոտարական գրասենյակներ և ժառանգական գործը անվճար վերանայել:**
4. ՀՀ արդարադատության նախարարությունը պարտավոր էր պատշաճ վերահսկողություն իրականացնել՝ բացառելու ՀՀ նոտարների կողմից առոչինչ փաստաթղթերի ձևակերպման և նոտարական սխալների ուղղման գործընթացի վերաբերյալ, հաշվառել ՀՀ նոտարաական գրասենյակոներում պահպանվող կտակների վերացնելու կամ փոփոխելու մասին ոչ լեգիտիմ դիմումները:
5. ՀՀ Արդարադատության խորհուրդը, այժմ ԲԴԽ-ն պարտավոր է վարույթ հարուցել այն դատավորների նկատմամբ, որոնք «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի, ինչպես նաև 56-րդ հոդվածի 5-րդ կետի կիրառումը, իրենց վճիռներում համարել են օրինական՝ այսինքն՝ **կտակը վերացնելու կամ փոփոխելու մասին դիմումի տակ եղած ստորագրության վավերացումը համարել են իրավաչափ կտակի վավերացման համար սահմանված կարգին համապատասխանող**: Ի դեպ օրինախախտ դատավորների կազմում կարող է ընգրկվել նաև Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր **Կարինե Պետրոսյանը:** «*Ես՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Կարինե Պետրոսյանս, անվստահություն եմ հայտնում Հայաստանի Հանրապտության Սահմանադրության խախտմամբ ընտրված և տարիքը լրացած լինելու հիմքով լիազորությունները դադարած Բարձրագույն դատական խորհրդի նախագահ Գագիկ Հարությունյանին*», - *ասված է նրա գրառման մեջ, http://www.armtimes.com/hy/article/152399*:

Դատավորներ Կարինե Պետրոսյանը և Ալեքսեյ Սուքոյանը 2018թ. օգոստոսի 13-ին հայցադիմում են ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ պահանջելով «Սնանկության դատարանի դատավորներ նշանակելու համար թեկնածություններ առաջարկելու վերաբերյալ» 2018թ. օգոստոսի

6-ի ԲԴԽ-31-Ո-75/2018 թվականի որոշումը և նախագահ Արմեն Սարգսյանի հրամանագիրը ճանաչել անվավեր: Սա առաջին անգամ է, երբ դատական կարգով դատավորը վիճարկում է ԲԴԽ-ի և ՀՀ նախագահի որոշումը:

6. Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 2015թ. փոփոխությունները, ՀՀ կառավարությունը, ՀՀ արդարադատության նախարարությունը, ՀՀ վճռաբեկ դատարանը, ինչպես նաև ՀՀ Արդարադատության խորհուրդը, այժմ ԲԴԽ պարտավոր էին և պարտավոր են ՀՀ Ազգային ժողովին, ինչպես նաև հանրությանը տեղեկացնել կատարված աշխատանքի արդյունքների մասին, որոնք առնչվում են «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նշված փոփոխության արդյունավետ և միատեսակ կիրառման հետ:

2019թ.

7. **Անցել է ութ տարի, սակայն չեն բացահայտվել պաշտոնատար անձինք, որոնք նշված օրենքում (ուժի մեջ մտել 01.03.2002թ.) գիտակցաբար ընդգրկել են հակասահմանադրական դրույթներ և դրանց օգնությամբ իրականացրել նոտարական ու դատական համակարգերում խարդախության սխեման:** Ի դեպ Բազելի կոնվենցիային միանալու վերաբերյալ առաջարկությունները մինչ օրս չեն իրականացվել:

8. ՀՀ կառավարությունը կհասնի հաջողությանը, եթե առաջին հերթին արդյունավետ պայքարի կոռուպցիոգեն իրավանորմերի վերացման ուղղությամբ:

Գրիգորի Վահանյան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսսոր,
ՀՀ սահմանադրական դատարանի խորհրդական (2003-2018թթ.), Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողովի) լիազոր ներկայացուցիչ

Ուշադրություն

Հարգելի ՀՀ քաղաքացի և նոտար.

Եթե դուք հայտնաբերեք հայտարարություն կամ դիմում՝ կտակը փոփոխելու, լրացնելու կամ վերացնելու մասին, որի տակ առկա է ստորագրության վավերացում «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի իրավադրույթների համաձայն, ապա անհրաժեշտ է գիտակցել, որ ձեր ձեռքում առոչինչ փաստաթուղթ է, որը չի առաջացնում իրավական հետևանքներ:

Դուք կարող եք այդ հայտարարությունը կամ դիմումը փոխանցել ՀՀ արդարադատության նախարարություն կամ գցել աղբարկղ:

ՀՀ ՕՐԵՆՔԸ ՆՈՏԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆ (Arlis)
(56-րդ հոդվածը խմբ., լրաց. 19.10.16 ՀՕ-180-Ն)

Հոդված 56. Կտակի վավերացումը

1. Նոտարը վավերացնում է գործունակ անձանց կտակները:
2. Ներկայացուցիչների միջոցով կտակների վավերացում չի թույլատրվում:
3. Կտակը վավերացնելիս կտակարարից կտակվող գույքի նկատմամբ նրա սեփականության կամ այլ իրավունքը հաստատող ապացույցներ չեն պահանջվում:
4. Կտակը կարող է վերացվել կամ փոփոխվել կտակարարի կողմից՝ համապատասխան դիմում տալու կամ նոր կտակ կազմելու ձևով: Կտակում փոփոխություններ ու լրացումներ կատարելու, ինչպես նաև կտակը վերացնելու մասին դիմումը վավերացնում է հիմնական կտակը վավերացրած նոտարը, բացառությամբ նոտարին փոխարինելու և պաշտոնից ազատելու դեպքերի:

4.1. Նոտարին փոխարինելու դեպքում սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված նոտարական գործողությունը կատարում է փոխարինող նոտարը:

5. Կտակը վերացնելու մասին դիմում ստանալու, ինչպես նաև կտակը վերացնող կամ փոփոխող նոր կտակ ստանալու դեպքում նոտարն այդ մասին նշում է անում նոտարական գրասենյակում պահվող կտակի օրինակի վրա և նոտարական գործողությունների գրանցամատյանում: Կտակը վերացնելու կամ փոփոխելու մասին դիմումը վավերացվում է կտակի վավերացման համար սահմանված կարգով:
6. Կտակը նոտարը վավերացնում է Քաղաքացիական օրենսգրքով և սույն օրենքով նախատեսված կարգով:
7. Նոտարը ժառանգության բացման մասին տեղեկանալու պահից ծանուցում է ժառանգներին կտակի առկայության մասին:
8. Նոտարը ժառանգական գործերը և կտակները մուտքագրում է ժառանգական գործերի վարման և կտակների առցանց շտեմարան:

(56-րդ հոդվածը խմբ., լրաց. 19.10.16 ՀՕ-180-Ն)

Խնդրի հետ կապված
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

2012 թ.

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (6 մարտի 2012թ.) (ՍԴԴԿՈ/2-5)
2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԳՐԻԳՈՐԻ ՎԱՀԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 204.32-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴԱՈ-21)
3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ «ՔԱՂԱՔԱՑԻ ԳՐԻԳՈՐԻ ՎԱՀԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 204.32-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՕՐԸ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ՍԴԱՈ-50)

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԳՐԻԳՈՐԻ ՎԱՀԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 204.32-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ-1049)

2013 թ.

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (15 մայիսի 2013թ) (ՍԴԴԿՈ/2-14)
2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (10 հուլիսի 2013թ.) (ՍԴԴԿՈ/1-21)
3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԳՐԻԳՈՐԻ ՎԱՀԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՆՈՏԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 67-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ /Քննության է ընդունվել ՍԴ թիվ 1 դատական կազմի 10.07.2013թ. ՍԴԴԿՈ/1-21 որոշմամբ/ (ՍԴԱՈ-71)
4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ «ՔԱՂԱՔԱՑԻ ԳՐԻԳՈՐԻ ՎԱՀԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՆՈՏԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 67-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ՍԴԱՈ-95)

2014 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԳՐԻԳՈՐԻ ՎԱՀԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ,ՆՈՏԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆեւ ՀՀ ՕՐԵՆՔԻ 67-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ՍԴՈ-1140)

«Законы пишутся кровью тех, для кого они предназначаются» *Ի. Բենտ*